ԶԼՄ Էթիկայի դիտորդ մարմնի փորձագիտական եզրակացությունը «Դելովոյ Էքսպրես» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Էդուարդ Նաղդալյանի դիմումի կապակցությամբ

Քննարկելով «Դելովոյ Էքսպրես» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Էդուարդ Նաղդալյանի դիմումը թերթի խմբագրության կողմից «Դ.Է.Լ.Վ.» ՍՊԸ-ի տնօրեն պարոն Վարդանյանի բողոքի կապակցությամբ, որը վերաբերում է 2009 թվականի դեկտեմբերի 8-ին «Դելովոյ Էքսպրես» շաբաթաթերթում տպագրված «Սոֆիա- Երեւան-Պեկին» հոդվածին, Դիտորդ մարմինը արձանագրում է հետեւյալը.

Դիմումում ներկայացված նյութը տպագրված է գովազդային հիմունքներով, ուստի տվյալ դեպքում «Դելովոյ Էքսպրես» շաբաթաթերթը հանդիսանում է գովազդակիր: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, մասնավորապես «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ գովազդակիրը պատասխանատվություն չի կրում գովազդային հաղորդագրության բովանդակության համար: Բացառություն են կազմում նույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված դեպքերը, ըստ որի՝ գովազդակիրը պարտավոր է պահանջել գովազդի արտադրության համար ներկայացվող տեղեկատվության հավաստիության փաստաթղթային վավերացում (արտոնագրեր, տեղեկանքներ): Քննարկվող նյութը ենթակա է կարգավորման «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված կարգով, ուստի բողոքարկող անձի կողմից Ձեր շաբաթաթերթին ներկայացված պահանջները հիմնավորված չեն, քանզի վերջինս պատասխանատվություն չի կրում գովազդային հաղորդագրության օրինականության և պատշաճության համար:

Նշենք նաև, որ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից ընդունված Վարքականոնն այս օրենսդրական դրույթի խախտման համար որևէ այլ կամ լրացուցիչ պատասխանատվության միջոց չի նախատեսում:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ Դիտորդ մարմինը եզրակացնում է, որ բողոքարկող անձի կողմից ներկայացվող պահանջները՝ նյութը կայքէջից հանելու և հակագովազդ տպագրելու մասին, պետք է հասցեագրվեն ոչ թե գովազդակրին՝ տվյալ դեպքում «Դելովոյ Էքսպրես»-ին, այլև՝ գովազդատուին, որը կոնկրետ դեպքում հանդիսանում է գործարար Մարին Հալամպինը: Միևնույն ժամանակ, տվյալ գործը ենթակա է լուծման դատական կարգով՝ համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված կարգի:

Վերջապես, ելնելով գովազդատուներին հավասար հնարավորությունների տրամադրման սկզբունքից, որն ամրագրված է նաև Ինքնակարգավորման վարքականոնով, բողոքարկող անձն իրավունք ունի նույն հիմքերով գովազդ տեղադրել «Դելովոյ Էքսպրես» շաբաթերթում: Գովազդային հաղորդագրությունը պետք է տպագրվի վիճարկվող նյութի նույն ծավալով, նույն տեղում, նույն պայմաններում և տեղադրվի շաբաթաթերթի ինտերնետային կայքէջում:

Ընդունվել է ԶԼՄ-ների Էթիկայի Դիտորդ մարմնի
2010 թվականի փետրվարի 4-ի նիստում